

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք, Զովունի վարչական շրջան, 30-րդ փողոց 2-րդ նրբանցք, թիվ 1 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենք

Պատվիրատու՝

<<Սաֆարյան շին>> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

1.1 Հապավումներ 3

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը 7

1.3.1 *Նախատեսվող գործունեության նկարագիր*..... 7

Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ 10

1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը 11

1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 19

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 19

1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ..... 20

1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա 23

1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում..... 25

2.ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ 27

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 27

2.2 ԿԼԻՄԱՆ..... 31

2.3 Օդային ավազան 34

2.4 Ջրային ռեսուրսներ 35

2.5 Հողերի նկարագիրը 36

2.6 Հիմնային աշխատանքներ..... 36

2.7 Կենսաբազմազանություն 37

2.8 Թափոնների կառավարում 38

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ..... 39

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 39

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ..... 40

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 40

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ..... 40

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ 41

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ 41

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 42

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 44

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 45

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ..... 46

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 49

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 52

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 53

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ <<Սաֆարյան շին>> ՍՊԸ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Երևան , Միլիկյան թ. 4փ , 9 տուն
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ Երևան , Դավիթ Անհաղթի 8/13
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Եղվարդ խոշորացված համայնքի Զովունի վարչական շրջան

1.1 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք, Զովունի վարչական շրջան, 30-րդ փողոց 2-րդ նրբանցք, թիվ 1 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բազմաֆունկցիոնալ նշանակության շինություն:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հասարակական շինության աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»
12. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում:

18. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:

19. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Կոտայքի մարզ, Նաիրի համայնք Ջովունի գյուղ, 30-րդ փող. 2-րդ նրբանցք հ. 1 և 1/3 հասցեներում բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագիծը (պատվիրատու՝ «ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ) մշակված է համաձայն Կոտայքի մարզ, Նաիրի համայնքի ղեկավարի կողմից 21.06.2022 թ. Հաստատված N CPPO-0000-1549 ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենքը տեղադրված է թեք ռելիեֆի վրա, որը կազմում է 0.23872 և 0.05 հա մակերես: Տեղանքի թեքությունը թույլ է տալիս -1 ավտոկայանատեղի ունենա արտաքին լուսավորություն:

Բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենքը նախատեսված է 20 հարկանի: Վերին 19-րդ և 20-րդ հարկերը նահանջող են:

Հաշվի առնելով առկա ավտոկայանատեղիների խնդիրը ,բնակելի շենքը ունենալու է երեք ստորգետնյա հարկերում ավտոկայանատեղեր յուրաքանչյուր հարկում համապատասխանաբար 54. 56 և 56 - ական ավտոկայանատեղի, որտեղից վերելակով անմիջապես կարող էք բարձրանալ Ձեր բնակարանի համապատասխան հարկը: Ավտոկայանատեղի հարկերը միմիանցից առանձնացված է: Թեքանցի մեկ կողմից նախատեսված է մայթ: Թեքանցի վրա ելքերի համար դարպասում նախատեսված է հակահրդեհային դուռ: Աստիճանավանդակի դռները նախատեսված է հակահրդեհային:

Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունված է 3.30մ:

Բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկը հասարակական նշանակության է, որտեղ հնարավոր է լինելու բանկ, մանկապարտեզ, սուպերմարկետ, դեղատուն և երեխաների զարգացման կենտրոն:

Բնակելի շենքի ունի 2 շքամուտք յուրաքանչյուրն 2 վերելակ՝ բեռնատար և մարդատար: Հատակագծային լուծումները մշակվել է համաձայն պատվիրատուի առաջադրանքի, հաշվի առնվելով նորմատիվ պահանջները:

Բնակելի շենքի բաղկացած է 2 մասնաշենքից, բնակարանների ընդհանուր թիվը համապատասխանաբար կազմում է 320 / 48.11 քմ-ց մինչև 135.37քմ./:

Բնակարանների մեծամասնությունից հիանալի տեսարան է բացվում դեպի Արարատ լեռը Համալիրն ունի 1-ին կարգի սեյսմակայունություն և համապատասխանում է սահմանված բոլոր չափանիշներին և դասվում է որպես էներգախնայող, քանի որ բոլոր պատերը ջեմամեկուսացվելու են հատուկ նյութով:

Բնակելի շենքի պատուհանները և պատշգամբ դուրս եկող դռները իրականացվելու է այլումինե բարձր որակի պրոֆիլներով: Բնակելի շենքում նախատեսված երկու վերելակ / 1000 կգ. և 630կգ./:

Բնակելի շենքի որմնախարիսխը նախատեսված է երեսպատել բազալտե սալիկներով, ճակատների վերին հատվածը նախատեսված է երեսպատել տրավերտինե սալիկներով:

Բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենքը սպասարկումը ներառում է՝

- շուրջօրյա անվտանգության ծառայություն
- ընդհանուր գոտիների մաքրություն և լուսավորություն
- վերելակների շուրջօրյա սպասարկում
- այգեպանի ծառայություն

Տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել, այդ թվում տնկվելու են բազմաթիվ դեկորատիվ ծառեր և բույսեր / արծաթափայլ եղևվնի, տույաներ և այլն/:

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ և հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով / ամրանը տեղական արտադրության/:

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ:

Նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ`

- Հողի ընդհանուր մակերես` 2887.2 քմ;**
- Կառուցապատման մակերես – 1469.8 քմ,**
- Կանաչապատման մակերես` 1155 ք.մ.;**
- Ճանապարհ, մայթ, ճեմուղի – 262.4 քմ;**
- Բնակարանների քանակ – 320 հատ;**
- Ավտոկայանատողի – 166 հատ:**

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Հասարակական շինության օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Շենքի հասարակական հատվածի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակալենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Շենքերի էներգաարդյունավետության մակարդակը գնահատելու համար՝ նախատեսված է օդափոխվող ֆասադային համակարգ /вент-фасад/, որը ներառում է ջերմամեկուսիչ շերտի առկայությունը, երեսպատվող քարերի համար լրացուցիչ կոնստրուկտիվ համակարգ, անկեռներով ամրացված արտաքին պատի մակերևույթին: Արտաքին պատի արտաքին կողմից ամրացվող ջերմամեկուսիչ շերտը՝ 100մմ հաստությամբ հանքային բամբակի սալիկները ապահովում են արտաքին պատերի ջերմային դիմադրության նորմատիվային պահանջները /հանգույցները կցվում են / :

Շենքերի տանիքները նախատեսված է հարթ, չշահագործվող: Տանիքի համար նախատեսված շերտերը նույնպես հաշվարկված են բարձր ջերմային դիմադրության համար, որը բարձրացնում է շենքերի էներգաարդյունավետությունը:

1.3.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների կատարող «ԳԵՈՌԵՍԵՐԶ» ՍՊԸ, Նշված աշխատանքների իրականացման համար հիմք են ծառայել պատվիրատուի հետ կնքված թիվ 22-13 պայմանագիրը և աշխատանքների կատարման տեխնիկական առաջադրանքը: Ինժեներա-երկրաբանական հետազոտությունների իրականացման Արտոնագիր (լիցենզիա) 17340 տրված 05.11.2019: Սույն հաշվետվության մեջ տրված են կառույցների նախագծային և աշխատանքային փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտ ինժեներա-երկրաբանական հետազոտությունների տվյալները:

Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների նմուշարկում և լաբորատոր փորձարկումներ, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախագծահետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում: Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն «ՍաֆարյանՇին» ՍՊԸ տնօրենի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի և ՀՀ տարածքում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների: Նախագծման փուլը՝ նախագծային և աշխատանքային փաստաթղթավորում. Բարդության աստիճանը ըստ ինժեներա-երկրաբանական պայմանների - II (միջին): Ինժեներա-երկրաբանական տեղագնումն իրականացվել է տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունների տեսողական գնահատման, երկրաբանական և ինժեներա-երկրաբանական վտանգավոր պրոցեսների և երևույթների բացահայտման նպատակով:

Դաշտային աշխատանքներն իրականացվել են գլխ. երկրաբան Ն. Մ. Ալեքսանյանի ղեկավարության ներքո, «ԳԵՈՌԵՍԵՐԶ» ՍՊԸ հորատող խմբի կողմից, 2022 թ. փետրվար և մարտ ամիսների ընթացքում: Աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր առմամբ հորատվել են 6 հորատանցքեր, ՈւԳԲ-1ՎՍ հորատող հաստոցով, սյունակային եղանակով, չոր մեթոդով, հանուկի ընտրմամբ (հորատման տրամագիծը 96-151 մմ): Հետազոտական աշխատանքների կամերալ մշակումը և սույն եզրակացության կազմումն իրականացվել է Ն. Մ. Ալեքսանյանի կողմից: Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները տրված են լաբորատոր փորձարկումների տվյալների և ՀՀ տարածքում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի համաձայն: Հորատանցքերի տեղակայումն իրականացվել է Պատվիրատուի կողմից տրամադրված տեղամասի 1:500 Մ-բի տեղագրա-գեոդեզիական հանույթի վրա:

h/h	Գրունտի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշի (ցուցանիշի) անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը					
			լիցքային գրունտ	կավակա սպիտակահողային	խճա-մանրախճային գրունտ	մեծաբեկորային գրունտ	բազալտ, անդեզիտա-բազալտ	խարամ հրաբխային
			1	2	3	4	5	6
1	Խտությունը, գ/սմ ³	ρ_0	1.60	1.70	1.90	2.10	2.35	1.65
2	Ներքին շփման անկյունը, աստիճան	φ	—	20	25	35	—	13
3	Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	—	12	—	1	—	—
4	Դեֆորմացիայի մոդուլը, ՄՊա	E_0	—	10	30	32	—	16
5	Պայմանական հաշվարկային դիմադրությունը, ՄՊա	R_0	—	0.15	0.35	0.60	—	0.25
6	Ժայռային գրունտների միառանցք սեղմման դիմադրությունը ՄՊա	R_c	—	—	—	—	80.0	—
7	Ներքնակի գործակիցը (Коэффициент постели) տ/մ ³	C_1	—	1000	4000	15000	70000	3000
8	Գրունտի մշակման պարագրաֆը և կատեգորիան, ՇՆԵԿ IV-2-82,	աղյ 1-1	24-բ	34-վ	12	18-բ	—	13
		աղյ 1-3	—	—	—	—	20-ա,20-բ	—
9	Գրունտի կարգը ըստ նրա սեյսմիկ հատկանիշների, ՀՀՇՆ 20-04		III	III	I	I	I	I

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ ինժեներատեղագրական էլեմենտներով՝ (վերևից-ներքև)։

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպատկապնդված, կավավազա-մանրախճային կազմի, հազվադեպ քարաբեկորներով, ավազային նյութի խառնուրդով մինչև 20%, տեղ-տեղ շինարարական թափոններով, տարածված է տեղամասի ողջ մակերեսով, հզորությունը՝ 3.0-8.0 մետր։ Տեխնաձին առաջացումներ

Շերտ թիվ-2 կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.4-1.0 մետր։ Չորրորդականի հասակի էյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ։

Շերտ թիվ-3 խճա-մանրախճային գրունտ, հրաբխային ապարներից, միջբեկորային կավավազային, հազվադեպ հրաբխա-ավազային լցանյութով մինչև 25%, տեղ-տեղ մանրախճի և կավավազների բներով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.6-2.4 մետր։ Չորրորդականի հասակի էյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ։

Շերտ թիվ-4 մեծաբեկորային գրունտ, խարամացած և շեղաքարացած հրաբխային ապարներից, միջբեկորային ավազային, հազվադեպ կավավազային լցանյութով մինչև 15%, տեղ-տեղ խճի և մանրախճի բներով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է,

լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-3.0 մետր: Չորրորդականի հասակի էյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ-5 բազալտ, անդեզիտա-բազալտ, մոխրագույն, թույլ ծակոտկեն և թույլ ճեղքավորված, մասամբ ջարդոտված, երբեմն մեծաբեկորների աստիճանի, զանգվածային, պինդ, ամուր, ստորին մասում փոքր միջակայքերում ուժեղ ծակոտկեն, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 15.0 մետր: Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

Շերտ թիվ-6 խարամ հրաբխային խճա-բեկորային կազմի, մասամբ մանրախճային և կազմի, տեղ-տեղ հրաբխա-ավազային լցանյութով մինչև 10%, խարամացած, շեղջաքարացած բազալտների կտորներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր: Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

Եզրակացություններ

Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների նմուշարկում և լաբորատոր փորձարկումներ, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:

- Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Քասախ-Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա արևմտյան մասում, Էռզլինա-հողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն արևմտյան թեքություններ, անկումները կտրուկ են, արևմտյան մասում թեքությունները համեմատաբար մեղմանում են: Անմիջապես հետազոտման տեղամասի մակերեսը շահագործման նպատակով հարթեցված է, որի արդյունքում տեղամասի հարավային հատվածում լիցքային գրունտների հզորությունը հասնում է 4.0 մետր:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1154.5-1155.5 մետրի սահմաններում: Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ: Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

- Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Գրունտային ջրերը հորատանցքերով մինչև 40.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը:

- Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքերի վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 40.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 6 շերտեր:

- Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կավավազային գրունտները (շերտ թիվ-2), կարբոնատային կեղևի, մասամբ նաև խճա-մեծաբեկորային գրունտների (շերտ թիվ-3) լցանյութերը ցուցաբերում են ենթաողողամաշման (субфозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք ու ջրհեռ համակարգ, դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:


- Հարկ է նշել նաև, որ համաձայն հորատման աշխատանքներից ստացված տվյալների տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող բազալտների հաստվածքը ևս ունի բավական տարաբնույթ տեղադրման, տարածման առանձնահատկություններ և բնութագրվում է ֆիզիկական վիճակի խիստ մեծ տարբերություններով: Մասնավորապես թիվ 1, 3, 4 և 6 հորատանցքերի մասում ժայռային գրունտները հաճախակի հերթափոխվում են խճային, խարամային և մեծաբեկորային գրունտների շերտերով, իսկ թիվ 2 և 5 հորատանցքերի հատվածում դրանք ներկայացված են հիմնականում հոծ, մասամբ ճեղքավորված բազալտներով, ընդ որում վերջիններս փոքր միջակայքերում ունեն չափազանց մեծ ամրություն և համաձայն հորատման տևողության պատկանում են մշակման VIII կարգին դասվող գրունտներին: Անհրաժեշտ է նշել, որ խարամային գրունտների և ճեղքավորված բազալտների հաստվածքում, դրանց շերտերի տարբեր հատվածներում հորատման աշխատանքների ընթացքում բացահայտվել են խիստ թերխիտ տեղամասեր, կամ դատարկություններ:

Համաձայն ՀՀՇՆ 20-04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:

Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայական պայմաններ:



Գլխավոր հատակագիծ



Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տեղեկությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետևյալ հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տեղեկությունը ծրագրվում է 36 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

N Ը/Կ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԱՄԱՅՈՒԿՆԵՐ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ՆԱԽԱԴԱՏՐՈՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—											
2	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—	—										
3	ՄԻԱԶՈՒՅՆ ԵՐ ՀԻՄՔԵՐ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎՆԵՐ			—	—	—	—	—	—	—			
4	ՊԱՏԵՐ ԵՎ ՄԻՋՆԱՊԱՏԵՐ					—	—	—	—	—			
5	ԲԱՅՎԱԾՔՆԵՐ /ՊՈՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒԳԱՆՆԵՐ/							—	—	—	—		
6	ՆԵՐՔԻՆ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՑԱՆԵՐ								—	—	—		
7	ՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ									—	—	—	—
8	ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ												—

Ն.Գ.Ճ.	Ա. ՍԱՐԳՍԻՅԱՆ	ՔԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՔԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՎԵԼԻ ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ, ՆԱԽԻՒ ՎԱՆԱՆՔ ՏՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂ, 30-րդ ՓՈՂՈՑ 2-րդ ՆՐՈՒՆՔՑ 1 ԵՎ 1/3 ՎԱՅԵՆԵՐ ՊԱՏՎՈՐԱՑՈՒ	«Ամբարշատ» ՍՊԸ	Փ Ո Ւ	Յ Ե Ր Յ	Յ Ե Ր Յ Ե Ր
ՆԱԽԱԳԾ.	Ա. ՍԱՐԳՍԻՅԱՆ	ՀԻՆԱՐԱՊՈՅՑԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ		ԱՆ	ՀԿԸ-Գ	10
«ՍԵՑԱՍԱՆԱԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Կ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		ՀԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		«ՍԵՑԱՍԱՆԱԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		

1.3.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնիտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնիտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնիտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնիտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնիտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան կամ Եղվարդ քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելիանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:


3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:


- ՕՍՆՈՒՅՎՈՒՅՑՈՒՄ**
- ՍՇԱԿՈՂ ԲԱՐՈՂԻ ՕՒՂԼԸ V=25800³
 - ԲԵՏ ԼԻՑԻ ՕՒՂԼԸ V=5800³
 - ՍՈՒՑԱՅԱԾ ՇՈՒՄԻ ՕՒՂԼԸ V=450ՏՆ
 - ԿԵՆՏՐՈՆԻ ՍՈՒՂԼԸ 80ՏՆ
 - ԳԱՆՏՐՈՆԻ ԾՐԱԵՐՈՍՏՏՐԱԾԻ ՍԱԿԵՐԱԸ V=3100³

ԳՐԱԴԱՆՔԵՐ ԸՍՏ ԸՆԴՈՒՆՂԱՏՎԱԿՈՒՄ


- ՇՈՒՄ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ՍԿԵԼՈՒՑ ՍՈՒՑ ԱՆՐԱՊԵՇՏ Է ԿԱԾՆԵԼ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ԿԱՏՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ՍՆԿ)
- ՇՈՒՄ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ԿԱՏՐՆԵԼ ԴՐԱՊՈՒՆԵԼՈՂ ԱՆՎՏԱԿՈՒՅԱԿ ՏԵԽՆՎԱՅԻ ԿԱՆՈՒՆԵՐԸ, ԸՍՏ 08-IV-2008-Ի ԴՐՈՒՅՑՆԵՐԻՆ
- ՇՈՒՄ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ԿԱՏՐՆԵԼ ԸՍՏ ՆՇԱԾՈՒ ՕՐՈՑՈՒՅՑԱԿԻ ԳՐԱԿԻԿ ԵՎ ՃԱՄԱՆԱԿՈՒՅՑԻ:
- ՇՈՒՄ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ԿԱՏՐՆԵԼ ԴՐԱՊՈՒՆԵԼՈՂ ՇՈՒՄԵՐԸ, ԿԱՆՈՒՆԵՐԸ, ՍՏԱՆՂԱՊՆԵՐԸ, ԽՈՂՊԵՍ ԱՆՎՔ ՆԱԽԱԳԻԾ ՏԵԽՆՎԱԿԱՆ ԴՈՅՑՈՒՄԸ:
- ՇՈՒՄ ԳՐԱՊՈՒՐԿԵ ԿԱԾՈՒԿԵՐՈՒՄԵԼՈՂ ԴԵԿՎԱՐԻՆԵԼ ԳԱԿՈՒՅՑԱԿԻ ԴՈՑՏՄԱՆՈՒՅՑԱՆ ԿԱՆՈՒՆԵՐԸ, ԴՈՑՏՄԱՆԱՆՎԱՅՈՒՅՑՈՒՄԸ ԿՈՒՄ Է ՇՈՒՄՈՒՄՈՒՅՑԱՆ, ԴԵԿՎԱՐԸ, ԿԱՄ ՆՈՒՄ ՓՈՒԿԱՐԻՈՂ ՍՏՈՑ:
- ՍՇԱԿՐԱԿԱՅԻՆ ԿՈՒՄԿԵ ՍՏԱՏՈՒՅՑ ԵՎ ՍՏԱՏՈՒՅՑՈՒՄԸ ԿԱՏՐՆԵԼ ԳԱՄՏՄԱՍՏԱՆԻ, ՍՐՏՆԱԿԻ ՈՒՆԵՐՈՂ ԿԱԾՈՒԿԵՐՈՒՅՑԱՆ ԿՈՒՄԻՑ:
- ՇՈՒՄ ՍՇԱԿՍԱԵՐԵՐԻ ՍՏՈՑ ԳԱՄՏՄԱՍՏԱՆ ՇՈՒ ԹՈՒՆՏՎՈՒՅՑՈՒՄ ՍՏԱՆՈՒՄԻ ԲԵՏԻ:
- ԱՊՐՈՂՑ ԸՆԴՈՒՄՈՒՅՑԱՆ ԸՆԴՈՒՅՑՈՒՄ ԿԱՏՐՆԵԼ ՍՈՒՑԱՐՈՒՄԵՐ ԸՐՁԱԿ ՍՐՃԱԿԱՅԻ ԴՐԱՊՈՒՄՈՒՅՑԱՆ ԿԵՐԱԵՐԵԱԼ (ՏԵԽ ԲԱՅԱՏՐԱԳԻԸ)



ՇՈՒՄ ԳՐԱՊՈՒՐԿԵ ԸՍՏԱՆԱԿԱՆՈՒՄ ԵՐԱԿՈՒՄՑ ՏԵՍԻՍ 1-1



ՏԵԽՎԱՅՈՒՅՑԱԿ ԵՐՏԵՍԱԿ ՏԵՍԻՍ 2-2



- ԿԱՌՈՒՑԱՄԱՏՈՂ
- ՉԵԼԻ ԿԱՌԱՆՈՒՄ
- ԳԵՐՈՒՆԱԿԱՅԻՆ ԳՐԱՈՂ
- ՏԵԽՆՎԱԿԱՆ ԳՐԱՈՂ
- ՇՈՒՄ N
- ՇՈՒՄ ԹՈՒՆՏՎՈՒՅՑՈՒՄ

- ԴՈՑՏՄԱՆԱԿԱՆ ՆՇԱԿՆԵՐԻ ՍԿԵԼՈՒՄՆԵՐԸ
- 1 ՍՐՃԻ ԵՎ ԵՆՔ ՇՈՒՄ ԳՐԱՊՈՒՐԿԸ
 - 2 ՇՈՒՄ ՍԵՐԵՆԱԿԵՐԻ ՆՎԱՅՄԱՆ ԿԵՏ
 - 3 ԴՐԱԿԱԿԵՏ
 - 4 ԿԵՆՏ. ԵՎ ԳՐ.ՑԻՆ ԸՄՈՒՄ ՇՈՒՄՆԵՐ
 - 5 ՏԵԽՎԱՅՈՒՅՑԱԿ ԵՐՏԵՍԱԿ
 - 6 ԳԱԿՈՒՅՑԱԿԻ ԿՈՒՑԻ
 - 7 ՇՈՒՄ ԳՐ. ԳՈՇԵՐ. ՍՐՃԱՎՈՐՈՒՄ
 - 8 ԱՊՐՈՂԱՅԻՆ ԻՐԵՐԻ ԴՈՑՏՄԱՍՏԱՆ ԸՎԱՐՈՒՄ
 - 9 ՇՈՒՄ ԳՐ. ՃԱՄԱՆ. ՏԵԽՎԱԿԱՆ
 - 10 ԴՈՒՄԿ
 - 11 ԹՈՒՆՏՎՈՒՅՑԱԿ ԿՈՒՑԱԿԱՆ ԳՐԱՊՈՒՐԿԸ
 - 12 ԲՈՒՄՈՒՑՈՒՄ-ՆՎԱՅՄԱՆ
 - 13 ՇՈՒՄ ՆԱԽՈՒՅՑՈՒՄ ԳՐԱ ԴՐԱԿԵՍ

			ԲԱՅԱՏՈՒԿԵՐՈՒՄ, ԲԱՅԱՏՐԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՆՈՒՄԻ ԵՐԵՐ ԿՈՑԱՑԻ ՍՏՈՑ, ՆԱՐԻ ԸՍՏԱԵՐ ՏՈՒՄՈՒՄ ԳՐՈՂ, 30-րդ ՓՈՂՈՑ 2-րդ ՆՈՂԱՅԵՐ 1 ԵՎ 1/3 ԸՎԱՅՆԵՐ ԴԱՏՎՈՒՄԸ «Ամբարշտնի» ՍՊԸ		
Ն. Գ. Ճ.	Ա. ՍԱՐԿԻՐՈՅԱՆ		ՇՈՒՄՈՒՄՈՒՅՑԱՆ ԿԱԾՈՒԿԵՐՈՒՄՆ ԵՐԱԿՈՒՄ	Փ ՈՒ Ն	Թ Ե Ր Թ
ՆԱԽԱԳԻԾ	Ա. ՍԱՐԿԻՐՈՅԱՆ			ՇՈՒՄ	ԸՎՆ-3
					10
«ՍԵՑԱՄԱՆԱՎՏԱՆՈՒՅՑՈՒՄ» ՍՊԸ ՏՆՈՐԵՆ Կ. ԳԵՎՈՂԱՅԱՆ			ՇՆԿԱՆԱՎՏԱԿԱԿՈՒՄ	«ՍԵՑԱՄԱՆԱՎՏԱՆՈՒՅՑՈՒՄ» ՍՊԸ	

1.3.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 140 մարդ, որից
Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է
աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին
արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման
վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Կցովի աշտարակային վերամբարձ կռունկ	QTZ 125 սլաքը 40-50մ	1
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	JCB JS130LC	3
3	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	3
4	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИВ-91А	6
5	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИВ-102А	12
6	Փոխարկիչ թրթռիչների համար	ИВ-4	6
7	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
8	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	6
9	Տոփանիչներ պնևմո		6
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	6
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.3.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ 80 տոննա և շինարարական աղբն է՝ 450 տոննա: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 135 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 135 \times 0.025) \times 1080 = 3731.4 \text{ խմ/շին. ժամ.:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1080 = 1620 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5351 խմ/շին. ժամ:

Հասարակական շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը իրականացվելու է համաձայն գործող պայմանագրերի:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզ, Եղվարդ համայնքի Զովունի գյուղի տարածքում՝ 30-րդ փողոց 2-րդ նրբանցք, թիվ 19 հասցեում:

Հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հյուսիսային մասում, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղի վարչական տարածքում, նրա հարավ-արևմտյան եզրամասում, Երևան ք. Դավթաշեն վ/շ-ի հյուսիսային վերջնամասում, դեպի Ոստիկանության ԶՄ տանող ճանապարհի ձախ կողմում, նախկին ԱԳԼՃԿ տարածքում:

Զովունի գյուղը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում (Դավթաշեն վարչական շրջանի սահմանին), մայրաքաղաքից 1 կմ, իսկ մարզկենտրոն Հրազդան քաղաքից, մոտ 55 կմ հեռավորության վրա: Զովունի գյուղը ահմանակից է նաև Եղվարդ, Քանաքեռավան, Քասախ և Սրգաշեն համայնքներին:

Զովունի գյուղը գտնվելով Եղվարդի սարահարթի սահմաններում և բնութագրվում է մեղմաթեք, հարթաբլրային ռելիեֆով, բացարձակ բարձրությունները տատանվում են 1100-1150մ սահմաններում:

Եղվարդի սարահարթը զբաղեցնում է Հրազդան-Քասախ գետերի միջագետքի կենտրոնական հատվածը: Արևմուտքում, դեպի Քասախ գետի հովիտը սարահարթը իջնում է կտրուկ լանջի տեսքով, իսկ արևելքում, դեպի Հրազդան դետի հովիտը ձգվող հատվածում հստակ արտահայտված են երկու, առանձին հատվածներում՝ երեք էրոզիոն դարավանդներ: Լանջերի թեքությունը մինչև 30 է, բուխազրվում են մերձհորիզոնական հարթավայրեր:

Եղվարդի սարահարթի ձևավորումը կապված է Արայի լեռան վերին պլիոցենյան հասակի էֆուզիվ գործունեության և Արագած լեռան հարավային լանջի չորրորդական լավային ծածկոցների հետ: Կառուցվածքային տեսակետից կազմված է միոցենյան գիպսաբեր և աղաբեր կավերի և քարաղի հզոր նստվածքային շերտերով:

Երկրաբանական կառուցվածքը: Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Պլիոցեն-Ստորին Չորրորդականի հրաբխային առաջացումները՝ ներկայացված անդեզիտա-բազալտներով, անդեզիտա-դացիտներով, որոնք ծածկված են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ, էլյուվիալ և տեխնոգեն ծագման առաջացումների բավական հզոր (2.0-4.0 մետր) շերտախմբերով: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 40.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ բոլոր գրունտները:

Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» նախագծման նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի հետազոտվող տեղամասը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.3g արագացում և 8-9 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Գրունտային ջրերը հորատանցքերով մինչև 40.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը: Սակայն հարկ է նշել, որ մակերեսային ջրերը, ներթափանցելով գրունտային զանգվածների խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոտեխնիկ "փոս ընկած", ճկված, խորդուբորդ մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր(վերնաջրեր):

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադինացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Զովունի քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկայնություն:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ, քանի որ գործունեության ենթակա տարածքը գտնվում է բնակելի, կառուցապատված միջավայրում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշման ՀՀ Կոտայքի մարզում գրանցված են բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքները.

- Էրեբունու արգելոց,
- «Բանքսի սոճու» արգելավայր,
- «Արզական-Մեղրաձորի» արգելավայր,
- «Հանքավանի ջրաբանական» արգելավայր:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիայից է բնության հուշարձանը: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ: Համաձայն որոշման ՀՀ Կոտայքի մարզում հաշվառված են հետևյալ երեք հուշարձանները՝ «Անանուն» խզվածքներ, Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և 32 խարամների կոնտակտ և «Թագավորանիստ» խարամային կոն: Նշված հուշարձանները Եղվարդ քաղաքից գտնվում են 4կմ հեռավորության վրա, իսկ Զովունի գյուղից 10 կմ հեռավորության վրա:

Զովունի գյուղի վարչական տարածքում է գտնվում Կարմիր բերդ կոչվող պատմամշակութային հուշարձանը, այն թվագրվում է միջին բրոնզից մինչև վաղ միջնադար, իսկ հայտնաբերված խեցեղենի նմուշները՝ 2-րդ-1-ին հազարամյակներ, տարածքում պահպանվել են 7-րդ դ. բերդի ավերակները, նրան հարող տարածքով (Հրազդանի կիրճում) հոսում է Հրազդան գետը: Գյուղի արևելյան եզրին կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակներին թվագրվող կիկլոպյան ամրոց: Նշված հուշարձանները չեն առնչվում կառուցապատման համար նախատեսվող տարածքի հետ:

հուշարձան	վայր, հասցե
Ամրոց Կարմիր բերդ	գյուղի աե եզրին, հրվանդանի վրա
Դամբարանադաշտ	ամրոցից հվ-ամ, գյուղի մեջ
Դոլմեն	ամրոցից ամ, կիրճի եզրին
Միջնաբերդ	ամրոցի աե մասում, հրվանդանի եզրին
Արձանագրություն սեպագիր	պարսպի հս եզրին
Ժայռապատկեր՝ «Օձ»	ամրոցի հվ, հրվանդանի վրա
Ժայռապատկեր՝ «Վիշապ»	ամրոցի կենտր. մասում
Գյուղատեղի	ամրոցի հս, Հրազդան գետի աջ ափին
Գերեզմանոց	գյուղատեղիից ամ
Դամբարան	գերեզմանոցում
Տապանաքար	դամբարանից
Տապանաքար	
Տապանաքար	Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում
Տապանաքար	Փոքր Մհեր կրթահամալիրի տարածքում
Եկեղեցի	գյուղատեղիի հվ-աե եզրին
Խաչքար	եկեղեցու հվ եզրին
Խաչքար	եկեղեցու հվ եզրին
Ճանապարհ	Հրազդանի աջ ափին
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	գյուղի հս-աե մասում
Քարայր-կացարանների համալիր	Եղվարդի կիրճի աջակողմյան կտրվածքում, ամրոցից հս-ամ
Քարայր-կացարան «Զովունի-1»	գյուղից 2-3 կմ հս, Փոքր Մհեր կրթահամալիրի մոտ
Քարայր-կացարան «Համո-1»	գյուղի համասում, Եղվարդ գետի աջ ափին
Քարայր-կացարան «Համո-2»	գյուղի համասում, Եղվարդ գետի ձախ ափին
Քարայր-կացարան «Համո-3»	գյուղի համասում, Եղվարդ գետի ձախ ափին

2.2 ԿԼԻՄԱՆ

Դիտարկվող շրջանը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում: Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո:

Տարածքը գտնվում է շինարարակլիմայական II ենթագոտում, ունի չափավոր, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 39°C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -33°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 436 մմ: Գերակշռում են արևելյան ուղղության քամիները:

Ջյան ծածկոցի հաստությունը կազմում է 68սմ, ճնշումը՝ 70 կգ/սմ²: Հողի սառչելու խորությունը հասնում է 92սմ:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են քաղաքի կլիմայական ռեժիմն ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի (բացարձակ բարձրությունը 1336 մ) տվյալների: Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Չնաձածկույթ		
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,մմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436			
Եղվարդ	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53	68	47	156

Աղյուսակ 2.4. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կոնսենտումում. %	Միջին ամսական ատամոտում.մ/վ	Միջին տարեկան ատամոտում.մ/վ	Ուժեղ քամիներով (Մ15)մ/վ օտեռ. ամսական	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Եղվարդ	866.0	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1.1	2.6	29	24	29	34
			1.7	1.8	1.7	1.5	1.7	1.9	1.8	1.7							
		Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2.6					
			3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.7	2.1							
		Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4.8					
			4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	1.8							
Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1.9							
	2.7	3.1	2.1	1.9	1.9	2.3	1.8	2.2									

2.3 Օդային ավազան

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի: Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Եղվարդ քաղաքում և Զովունի գյուղում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

Համաձայն ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) վիճակագրական տեղեկագրի՝ 2021թվականի դրությամբ Զովունի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 8350 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 3), Զովունի գյուղում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում.

Փոշու մասնիկներ՝ 0,2մգ/խմ, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/խմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/խմ:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում: Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից: Դիտարկվող տարածքում հիմնական ջրային ռեսուր է հանդիսանում Հրազդան գետը, որը հոսում է Հրազդանի կիրճով՝ Ջովունի գյուղին հարող տարածքով: Հրազդան գետի Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և հանքայնացումով:

Տարածաշրջանով անցնում է Արզնի-Շամիրամի ջրանցքը, որը բաց տեսակի ջրատար է, սկիզբ է առնում Հրազդան գետից մոտ 1400 մ.ծ.մ. մակարդակից և ավարտվում 1000 մ.ծ.մ. բարձության վրա:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 25890 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր Հանվող 20090 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Եղվարդի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Համաձայն տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքի առաջին շերտը՝ խճային գրունտ ավազակավի լցոնով, շագանակագույն և կիսապինդ թանձրության: Դրանք ժամանակակից դելյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են:

2.7 Կենսաբազմազանություն

Բնութագրվող հողակտորը գտնվում է ամբողջապես կառուցապատված տարածքում, ուստի հայտի շրջանակներում չի դիտարկվում տեղանքում և հարակից տարածքներում բուսական կամ կենդանական տեսակների, էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակները:

Կառուցապատվող տարածքում բացակայում է ծառաթփուտային բուսականությունը: Կառուցապատումից հետո տարածքում կատեղծվի կանաչ գոտի, որի համար կբերվի բուսահող:

Եղվարդի սարահարթի տարածքը ներկայացված է հիմնականում տափաստանային բուսականությամբ: Հացազգի և հացազգի-բազմաբուսականությամբ տափաստանները հիմնականում փեստուկային լեռնային տափաստաններ են (*Festuca valesiaca* ձևավորումներ) բարակոտիկ կատարավորի (*Koeleria cristata*), կրակ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), ճիլ տափաստանայինի (*Phleum phleoides*) մասնակցությամբ: Առանձին հատվածներում նկատվում են ոչ մեծ հարուսներ, որոնցում ամբողջությամբ գերիշխում է երիզախոտը/երիզաքիստ երկարամազը: Նարդենների խմբավորումները աչքի են ընկնում իրենց բնորոշ դեղնականաչավուն գույնով. ամառվա սկզբին դրանց ցողունը սկսում է դեղնել, իսկ հուլիսին այդ բույսերի վերգետնյա հատվածը չորանում է:

Եղվարդ բնակավայրի շրջանում արձանագրված են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխ Օլթիի: Այն համարվում է վտանգված տեսակ, բուսատեսկանին սպառնացող վտանգը կապված է տափաստանների հերկման և գերարածեցման հետ: Աճելավայրերից մեկը Երևանի ֆլորիստիկ շրջանում՝ Նոր Գեղի և Եղվարդ բնակավայրերի միջև: Բույսը աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ.մ. 1500-2300մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնայն տափաստաններում: Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Եղվարդ բնակավայրի շրջանում հայտնի են.

- Քալաշյանի երկարաբեղիկը – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, որը տարածված է Արայի լեռան հարավային լանջերին՝ Եղվարդից դեպի հյուսիս-արևելք: Տեսակի պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

- Հայկական սևամարմինը – սահմանափակ արեալով տեսակ, Հայաստանի էնդեմիկ տարածված է Եղվարդ ավանի շրջանի լեռնատափաստաններում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

Կառուցապատվող տարածքում նշված բուսական և կենդանական տեսակները չեն կարող դիտարկվել, քանի որ տարածքը գտնվում է կառուցապատված, բնակելի միջավայրում:

2.8 Թափոնների կառավարում

Եղվարդ համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 80 տոննա, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 450 տոննա շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:
- Ջրոյական նիշում նախատեսվող նոր կանաչապատ մակերեսը կազմում է 1155 քմ:

- Տարածքում նախատեսվում է տնկել թխկի կարմիր-2 հատ, գնդաձև իլենի – 2 հատ, եղնի կովկասյան – 3 հատ, բարբարիս – 2 հատ, գնդաձև սամշիտ – 3 հատ, սյունաջև թույա – 5 հատ, սամշիտ 60 գծմ, ծաղկանոց/թզուկ վարդեր/-40քմ, սիզամարգ-1100քմ:
- Ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 120 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ`
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա` հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող հասարակական համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերապես ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հասարակական համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2440000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x45000	1620000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x35000	420000
Ամբողջ շինարարության համար		2440000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	<p>Թափոնների կառավարում</p>	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ</p>	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով,;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից էլքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ




0119

0146

0048
0050

0004

0005



ՔԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾԻ ԾԵՆՔ

0271

ԳԵՌՑՆԱՅ ԽՈՍՏԱՍՏՎՈՒՅԹ


ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՎԱԾ Է

ՆԱԽԻՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՔԻ ԴԵՎԿԱԿԱՐ

Ն.ՍԱՌԳՅԱՆ

Ներկայացված է զարմանալի և անհրաժեշտ է համապատասխանեցնել համայնքի ղեկավարի հրահանգի համաձայն 18.05.2022 թ. կայանադրված մատչելիության 07-029-0271-0053 մակերեսի չափը / հա/ 0.185

ՀԱՄԱՁԱՅՆՔԻ ԿՈՄՍԱՐԿԵՐ



94039

99747

0006


0120

0090

0016

2 ԲՈ

004



ԶՈՎՈՒՆԻ 30 - րդ փողոց

10.3


11.48 / 1127.56 / 11.40 / 1157.0 /

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ


- ՄՇԱԿՎՈՂ ԲՆԱՅՈՂԻ ԾԱՎԱԼԸ V=25890U³
- ՀԵՏ ԼԻՑԲԻ ԾԱՎԱԼԸ V=5800U³
- ԱՌԱՋԱՑԱԾ ՇԻՆ ԱՂԲԻ ԾԱՎԱԼԸ V=450ՏՆ
- ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻ ԾԱՎԱԼԸ 80ՏՆ
- ՀԱՄԱՅՆՔԻՑ ԶԲԱՂԵՑՐԱԾՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵԱԸ V=310U²

ՀՐԱՀԱՆՁՆԵՐ ԸՍՏ ՇԻՆՂԵՆՀԱՍԱԿԱԳԾԻ


- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱԶՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ԱԿՆ)
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԸՍՏ III-IV-2008-Ի ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԸՍՏ ՆՇՎԱԾ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ:
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՇԻՆ ՆՈՐՄԵՐԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԸ:
- ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՄ ՂԵԿԱՎԱՐԿԵԼ ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄ Է ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ, ԿԱՄ ՆՐԱՆ ՓՈՒՆԱՐԻՆՈՂ ԱՆՉԸ:
- ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՒՆԿԻ ՄՈՆՏԱԺՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂԱԽՑ
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿՍԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈՒ:
- ԱՄԲՈՂՉ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅԻՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (ՏԵՍ ԲԱՑԱՏՐԱԳԻԸ)



ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑԱՆԿԱՊԱՏ ՏԵՍԲ 1-1




ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ ՏԵՍԲ 2-2



- ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ _____
- ՂԵՆ. ԿԱՊԱՆԱՌՈՒ _____
- ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂ _____
- ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂ _____
- ՇՐՋԱՆ _____
- ՇԻՆ. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ _____

- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ
- 1 ՄՈՒՏՔ ԵՎ ԵԼՔ ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿ
 - 2 ՇԻՆ ՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ
 - 3 ՊԱՀՅԱԿԱԿԵՏ
 - 4 ԿԵՆՑ. ԵՎ ԳՐ-ՅԻՆ ՇԱՐԺ. ՇԻՆ-ՆԵՐ
 - 5 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ
 - 6 ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ԳՈՒՅՔ
 - 7 ՇԻՆ ՀՐ. ԳԻՇԵՐ. ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹ.
 - 8 ԱՄՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՇՎԱՔԱՐԱՆ
 - 9 ՇԻՆ ՀՐ. ԺԱՄԱՆ. ՑԱՆԿԱՊԱՏ
 - 10 ԴՈՆԱԿ
 - 11 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ
 - 12 ԲԻՈՋՈՒԳԱՐԱՆ-ԼՎԱՑՄԱՆԱՆ
 - 13 ՇԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՓԱԿ ՊԱՀՅԵՍ

Ն.Գ.Ճ.	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԿՈՆՍՅԵԻ ՄԱՐԶ, ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂ, 30-րդ ՓՈՂՈՑ 2-րդ ՆՐԱՄՆՑՔ 1 ԵՎ 1/3 ՀԱՍՑԵՆԵՐ ՊԱՏԿԻՐԱՏՈՒ «Սաֆարյանշին» ՍՊԸ			
ՆԱԽԱԳԾ.	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ	Փ Ո Ւ Լ	Թ Ե Ր Թ	
			ԱՆ	ՇԿԵ-3	
				10	
«ՍԵՅՄԱՄԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Վ. ԳԵՎՈՂԳՅԱՆ		ՇԻՆՂԵՆՀԱՍԱԿԱԳԻԾ	«ՍԵՅՄԱՄԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		



-0.525 / 1160.475 /

-3.45 / 1157.55 /

Ն.Գ.Ը.	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԲԱԶՄԱՅԻՆԿՑԻՐՆԱԼ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԵՆՔԻ ԿՐՏԱՅԹԻ ՄԱՐԶ, ՆԱԻԻ ՀԱՄԱՆՔ ԶՈՎՈՒՄԻ ԳՅՈՒՂ, 30-րդ ՓՈՂՈՑ 2-րդ ՆՐԱՆՑՔ 1 ԵՎ 1/3 ՀԱՅՑԵՆԵՐ ՊԱՏԿԻՐԱՏՈՒ «Սաֆարյան» ՍՊԸ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
		ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ	Ն	ՃԱ-	
		«ՍԵՅՍՄԱՆԿՎԱՏԱԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Վ. ԳԵԿՈՂԳՅԱՆ	ՃԱԿԱՏ ԸՍՏ 1 - 14 ՄՈՆՁՔՆԵՐԻ	«ՍԵՅՍՄԱՆԿՎԱՏԱԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԴԱԼՔ)**

Կոտայքի մարզ, Նաիրի համայնք
(մարզ, համայնք)

N CPP0-0000-1549 21.06.2022թ.

Օբյեկտ

Բազմաֆունկցիոնալ, բազմաբնակարան բնակելի շենք նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կատեգորիա)

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն
(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը /կատեգորիան/, նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Կոտայքի մարզ, Նաիրի համայնք Զովունի գյուղ, 30-րդ փ 2-րդ նրբանցք 1 և 1/3 հասցեներ, 07-029-0274-0148, 07-029-0271-0083**
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Սաֆարյան Շին, Մելիք Սաֆարյան**
Երևան, Սիլիկյան թ. 4 փ. 9 տուն, 41408199, safaryan.melik@mail.ru
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **Կառուցապատողի հայտ և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներ 14042022-07-0108, 06062022-07-0100**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **Երեք տարի**
(N1 Հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է **Բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում**
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

0.23872 հա, 0.05 հա

(հողամասի սահմանները կորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

Հարթ ռելիեֆային տարածք

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Սպասարկման ճանապարհ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) Նախագծվող և կից տարածքով անցնող ինժեներական հաղորդագծեր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Բնակավայրի բնակելի կառուցապատման հողեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համ ձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տրածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾՍՑԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծ 14042022-07-0108, 06062022-07-0100

վկայականներով ամրագրված հողամասերի սահմաններում:

Նախագիծն իրականացնել նախագծային և տեխնիկական նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Ըստ նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

Դիտարկել 9.7 կետը

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

-

9.5. կառուցապատման տոկոսը /կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին) տոկոսներով (%)
40% և ավելի

9.7. այլ պահանջներ

Մասնաշենքը նախագծել 3 ստորգետնյա հարկով, 20 բնակելի և մեկ տեխնիկական հարկերով՝ մինչև տանիքի պարապետը 71 մետր սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 Մեյսմակայուն շինարարություն

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը
Քանդման ենթակա շինություններ՝ 263.22քմ. ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ և 5.43 քմ մակերեսով պարիսպ

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները
Նախատեսել երեք հարկանի ստորգետնյա անտոկանգառ

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է «Վեոլիաջուր» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակ ության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է
(համաձայն N1 Հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Չկա

12.6. աղբահանություն

Նաիրի համայնքի «Բարեկարգում և բնակֆոնդ» ՀՈԱԿ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Հարթ ռելիեֆ, կազմակերպված ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

տարածքը բարեկարգել, կանաչապատել և լուսավորել
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Տեղական շինանյութեր և շինվածքներ, ավազ, խիճ, բետոն, քար, ամրն, և այլն
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

ըստ նորմատիվ պահանջների
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ
ըստ նորմատիվ պահանջների

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ
ըստ նորմատիվ պահանջների

19. Շրջակա միջավայրի պահպանում
շրջակա միջավայրը գերծ պահել վտանգավոր ազդեցությունից

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում
Շինարարական աղբի կազմակերպված տեղափոխում

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը
Երեք տարի աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ
ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N2-ի համաձայն՝ պետական համալիր
փորձաքննություն

ՀՀ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին
համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում
կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում
ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ
Էսբիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N1 Հավելվածի
89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ
Կազմակերպել հանրային լսումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ
լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N1 Հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի
սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)


26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում
Ապահովել

27. Այլ պայմաններ
նախագիծը համաձայնեցման ներկայացնել երեք օրինակից

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

Նորայր Մարգարյան

ՂԵԿԱՎԱՐ



(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, (0224) 2-11-10, yeghvard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2022թվականի N 1919-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Բավարարել «ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մելիք Ազատի Սաֆարյանի դիմումը Նաիրի համայնք, գյուղ Զովունի, 30-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1 և 1/3 հասցեներում գտնվող, սեփականության իրավունքով «ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ին պատկանող 07-029-0271-0083 և 07-029-0274-0148 կադաստրային ծածկագրերի հողամասերում (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներ N 06062022-07-0100, 14042022-07-0108) բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման վերաբերյալ և տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ կառուցման աշխատանքների աշխատանքային նախագծային փաստաթղթեր պատվիրելու համար:

2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանին քաղաքացուն ապահովել անհրաժեշտ փաստաթղթերով և հետևել դրանց ճիշտ իրականացմանը:

3. Պարտավորեցնել «ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մելիք Սաֆարյանին կառուցապատման աշխատանքներն սկսել միայն անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 14 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նաիրի գյուղ Ջովունի 30-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր 01.04.2022թ. թիվ 4632, Համաձայնագիր 08.04.2022թ. թիվ 5007

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-029-0274-0148

Մակերեսի չափը (հա)՝ 0.23872

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 14042022-07-0108, գաղտնաբառ՝ NPDDM3QDICNS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	07-029-0274-0148-004	պարիսպ	5.43 քմ, 13.03 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա են 263.22քմ. ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԺԱՍՄԵՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 14042022-07-0108, գաղտնաբառ՝ NPDDM3QDICNS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 3 հունիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նաիրի գյուղ Ջովունի 30-րդ փողոց 2-րդ նրբանցք 1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր՝ 08.04.2022թ. թիվ 5005, Համայնքի ղեկավարի որոշում՝ 27.05.2022թ. թիվ 1609-Ա, Քանդման թույլտվություն՝ 10.05.2022թ. N 2

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-029-0271-0083

Մակերեսի չափը (հա)՝ 0.05

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 06062022-07-0100, գաղտնաբառ՝ QMHN1ZGWAQFQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ


Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 06062022-07-0100, գաղտնաբառ՝ QMHN1ZGWAQFQ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կոտայքի մարզ
 Ջովունի համայնք
 Հատված կադաստրային քարտեզից
 Կադաստրային ծածկագիր՝ 07-029-0271-0148
 Մասշտաբ 1: 500

Կադաստրի
 կոմիտե




Կոորդինատներ		
	X	Y
1	8457275.7912	4455025.8655
2	8457277.6116	4455031.7954
3	8457255.7891	4455037.9107
4	8457252.5799	4455038.9256
5	8457247.4656	4455020.1995
6	8457223.3351	4455026.9630
7	8457221.3829	4455015.7255
8	8457220.7000	4455011.7800
9	8457220.4980	4455010.6776
10	8457221.1500	4455010.5000
11	8457238.9563	4455005.6493
12	8457280.0183	4454994.0845
13	8457281.3942	4454993.4908
14	8457295.6493	4454989.1568
15	8457301.0573	4454988.0258
16	8457304.9610	4454987.2095
17	8457310.9277	4455012.9064
18	8457308.2998	4455013.6998
19	8457292.7329	4455019.8733
20	8457290.4906	4455020.7626
21	8457287.5348	4455021.9336

սպասարկման գրասենյակ



Կոտայքի մարզ
Ջովունի համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-029-0271-0083,0148
Մասշտաբ 1: 2000

Կադաստրի
կոմիտե



Handwritten blue notes and signatures, including a large blue stamp that reads "ՀՀ ԿԱԴԱՍՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ" (Republic of Armenia Cadastre Committee).



սպասարկման գրասենյակ



Կոտայքի մարզ
 Զովունի համայնք
 Հատված կադաստրային քարտեզից
 Կադաստրային ծածկագիր՝ 07-029-0271-0083
 Մասշտաբ 1: 500

Կադաստրի կոմիտե



Կորդինատներ		
	X	Y
1	8457252.5799	4455038.9256
2	8457252.3414	4455039.0010
3	8457248.3430	4455040.2655
4	8457240.9060	4455042.6174
5	8457235.9537	4455044.1836
6	8457228.5109	4455046.5373
7	8457226.8516	4455040.4616
8	8457225.4768	4455035.4279
9	8457225.0858	4455033.9964
10	8457223.6325	4455028.6752
11	8457223.3351	4455026.9630
12	8457247.4656	4455020.1995

սպասարկման գրասենյակ




ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ


- ՄՇԱԿՎՈՂ ԲՆԱԳՈՂԻ ԾԱՎԱԼԸ $V=25890\text{m}^3$
- ՀԵՏ ԼԻՑՔԻ ԾԱՎԱԼԸ $V=5800\text{m}^3$
- ԱՌԱՋԱՑԱԾ ՇԻՆ ԱՂԲԻ ԾԱՎԱԼԸ $V=450\text{S}$
- ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԻ ԾԱՎԱԼԸ 80ՏՆ
- ՀԱՄԱՅՆՔԻՑ ԶԲԱԴԵՑՐԱԾՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵԱԸ $V=310\text{m}^2$

ՀՐԱՀԱՆՁՆԵՐ ԸՍՏ ՇԻՆԳԼԵԿՆԱԿԱԿՈՑԻ


- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱԶՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ԱԿԼ)
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԸՍՏ III-IV-2008-Ի ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԸՍՏ ՆՇՎԱԾ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ:
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՇԻՆ ՆՈՐՄԵՐԸ, ԿԱՆՈՆՆԵՐԸ, ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԱԽԱԳԻԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԸ:
- ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՄ ԴԵԿԱԿԱՐԿԵԼ ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ, ՊԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՒՄ Է ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵԿԱԿԱՐԿԵԼ, ԿԱՄ ՆՐԱՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՆՋԸ:
- ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՒՈՒՆԿԻ ՄՈՆՏԱԺՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
- ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԿՍԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՅ ՀԵՏՈՒ:
- ԱՄԲՈՂՋ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՏԵՆ ԲԱՑԱՏՐԱԳԻԸ)



ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՑԱՆԿԱՊԱՏ ՏԵՄՔ 1-1



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ ՏԵՄՔ 2-2



- ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ _____
- ԳԼԽ. ԿԱՊԱՆԱՌՈՒ _____
- ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂ _____
- ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂ _____
- ՇՐՋԱՆ _____
- ՇԻՆ. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ _____

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

- 1 ՄՈՒՏՔ ԵՎ ԵԼՔ ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿ
- 2 ՇԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ
- 3 ՊԱՀՊԱԿԱԿԵՏ
- 4 ԿԵՆՑ. ԵՎ ԳՐ-ՅԻՆ ՇԱՐԺ. ՇԻՆ-ՆԵՐ
- 5 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ
- 6 ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ԳՈՒՅՔ
- 7 ՇԻՆ ՀՐ. ԳԻՇԵՐ. ԼՈՒՄԱԿՈՐՈՒԹ.
- 8 ԱՄՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՏՄԱՆ ՇՎԱՔԱՐԱՆ
- 9 ՇԻՆ ՀՐ. ԺԱՄԱՆ. ՑԱՆԿԱՊԱՏ
- 10 ԴՈՆԱԿ
- 11 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

Ն.Գ.Ճ.	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ, ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵՆԻ ՇԵՆՔԻ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂ, 30-րդ ՓՈՂՈՑ 2-րդ ՆՐԱՄՆՑՔ 1 ԵՎ 1/3 ՀԱՍՑԵՆԵՐ ՊԱՏՎՈՐԱՏՈՒ «Սաֆարյան» ՍՊԸ			
ՆԱԽԱԳԾ.	Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ՆԱԽԱԳԻԾ	Փ Ո Ւ Լ	Թ Ե Ր Թ	Թ Ե Ր Թ Ե Ր
			ԱՆ	ՇՎՆ-3	10
«ՍԵՅՄԱՄԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		ՇԻՆԳԼԵԿՆԱԿԱԿՈՑ	«ՍԵՅՄԱՄԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ		



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԲԱՂՎԱԾՔ առ 2019-09-04

«ՍԱՖԱՐՅԱՆ ՇԻՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 271.110.1090427

Հիմնադրման տարի 2019

Գրանցման ամսաթիվ 2019-09-04

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 51778496

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 01295178

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) 49110427

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂ. 4-ՐԴ Փ. / Տ / 9 ԱԶԱՓՆՅԱԿ 0029
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս 0

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ՄԵԼԻՔ ՍԱՖԱՐՅԱՆ ԱԶԱՏԻ

Անձնագրային տվյալներ AR0342614 2017-06-22 012

Հասցե

ՍԻԼԻԿՅԱՆ ԹՂՄ. 4 Փ. / Տ / 9 ԱԶԱՓՆՅԱԿ 0029
ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրառված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը << դրամով՝ 100000

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը << դրամով
ԱՐՄԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ ԱԶԱՏԻ Անձնագիր հ/հ 006675250 տրվ. 012 ի կողմից Հասցե՝ ՖՈՒԶԻԿԻ Փ. / Տ / 24/3 ԱԶԱՓՆՅԱԿ 0048 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2019-09-04	20 %	20000
ՄԵԼԻՔ ՍԱՖԱՐՅԱՆ ԱԶԱՏԻ Անձնագիր հ/հ AR0342614 տրվ. 012 ի կողմից Հասցե՝ ՍԻԼԻԿԱՏԱՆ ԹՂՄ. 4 Փ. / Տ / 9 ԱԶԱՓՆՅԱԿ 0029 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2019-09-04	60 %	60000
ՇՈՂԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ ԱԶԱՏԻ Անձնագիր հ/հ 009972001 տրվ. 004 ի կողմից Հասցե՝ ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 54 ԱՐԱԲԿԻՐ 0028 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2019-09-04	20 %	20000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
------------------	-----------------

Քաղվածքը տրամադրող՝  **ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ**

ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **2019-09-04**





Անկ.




ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ 01206220410

«Առաջադաս Շին» ԱԿՁ.

ԲՆԱԿԱՆ ԳԱՋԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
(ՄԱՏԱԿԱՐԱՐ-ԲԱԺԱՆՈՐԴ (ԿԱՋՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆ))



3) Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործույթումը սկսվում է օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացույցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:

4) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպասում ունեցող Բաժանորդ՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացույցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում վերագանցվել է 10 հազար խորանարդ մետրը (Յնկախոսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ³ ճնշման պայմաններում):

2. ՊԱՅՄԱՆԱԿՐԻ ԱՌՈՒԿԱԼ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ՝ իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մտանկարարի և Բաժանորդի փոխարարությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳԱՄԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

1) սահմանագտման կետում սպասելի Բաժանորդի գազամատակարարումը՝ «Բնական վառելիքային» գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային կապուլակների համար՝ ԳՕՄՏ 5542-87-ով սահմանված պայմաններին համապատասխանող հարապակաս բնական գազով:

Պատասխանակալի ընտանիքային

2) 10 հազար խորանարդ մետր և ավելի սպասում ունեցող Բաժանորդին բնական գազ մատակարարել սույն պայմանագրով ամբողջված ժամանակացույցով և չափարանակներով (Հավելված №3):

3) կազմել և Բաժանորդին ներկայացնել մատակարարված բնական գազի համար վճարման փաստաթղթերը՝ ԳԱՄԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

4) չխոչընդոտել իր սեփականությունը հանդիսացող անհատային հաշվարկի կայան Բաժանորդի կամ նրա ներկայացուցիչների մուտքը՝ օպերատիվ տեղեկատվություն ստանալու, կամ անհատային հաշվարկի սարքերը կրելու, կամ կնիքների արկայությունը ստուգելու, կամ բնական գազի որակական իսպանակներն ուսումնասիրելու նպատակով բնական գազի նմուշառման համար:

5) ԳԱՄԿ-ով սահմանված կարգով և ժամկետում սպասելի պատասխան տալ Բաժանորդի դիմումին (բողոք, հարցադրում)՝ հանգամանորեն ներկայացնելով Բաժանորդի դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, նրա իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանդուստները, որոնք անհրաժեշտ կլինեն

Բաժանորդին ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումին վերաբերյալ:

6) գազատվածքի համակարգում վթարների և վթարային իրավիճակների դեպքերում Բաժանորդի կամ այլ անձանց անհազանցով դադարեցնել նրա գազամատակարարումը, վերականգնել դադարեցման պատճառների վերացումից հետո՝ ԳԱՄԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելով Բաժանորդին:

7) գազամատակարարման ընդհատման, սահմանափակման կամ դադարեցման դեպքում՝ բացառությամբ վթարների ու վթարային իրավիճակների Բաժանորդին նախապես տեղեկացնել և գազամատակարարումը վերականգնել ԳԱՄԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

8) սույն պայմանագրի լուծման կամ գազամատակարարման ժամանակավոր դադարեցման վերաբերյալ Բաժանորդի դիմումը հիման վրա կարգեցնել Բաժանորդի գազամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ոչ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում:

5. Բաժանորդը պարտավոր է.

1) վճարել մատակարարված բնական գազի դիմաց՝ սույն պայմանագրով և ԳԱՄԿ-ով սահմանված կարգով:

2) չօգտագործել բնական գազը կամ գազատվածքի համակարգը տեխնիկական պայմաններով, նախաձեռնել և գազատարափոխումների տեխնիկական փաստաթղթերով (անձնագրով) չնախատեսված նպատակներով ու պայմաններով:

3) գազատվածքի համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների, կամ անտարբայան, մտրիկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում, ինչպես նաև բնական գազի արտանետք հայտնաբերելու դեպքում անմիջապես ընդհատել բնական գազի սպասումը և այդ մասին անհապաղ հայտնել Մատակարարին:

4) իր նախաձեռնությամբ գազատվածքի համակարգում փոփոխություններ (այդ թվում՝ սարքավորումների, դրանց նյութային, սպարման ձափակների) կատարելու, համար, ԳԱՄԿ-ով սահմանված կարգով դիմել Մատակարարին:

5) չխոչընդոտել Մատակարարի ներկայացուցիչների մուտքը իր գազատվածքի համակարգի տեղակայման տարածք, եթե վերջինս ներկայացված է իր վաճառքային համապատասխան վրայակայան լուսանկարով և հայտնում է Բաժանորդի քարտի համարը:

Մատակարարի ներկայացուցիչի մուտքը գազատվածքի համակարգի տեղակայման տարածք իրականացվում է 2 րոպեից

6) իր սկզբակառույցները հանդիսացող (իս կողմից օգտագործվող) գազատապաստան համակարգի սերվավայրան տարածքը օտարերկրյա (օգտագործման իրավունքը դադարելու) դեպքում դիմել Մատակարարին վերջնահաշվարկ կատարելու և պայմանագրերը լուծելու համար:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱՋԻ ՉԱԷՎԱՌՈՒՄԷ

6. Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակը որոշվում է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի միջոցով՝ ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում: Բաժանորդին իրավունք ունի մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

7. 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում Մատակարարի և Բաժանորդի պատասխանատու անձինք Հաշվարկային ամսվա համար ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում կազմում են երկկողմ ակտ՝ Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակի մասին: Այն դեպքում, երբ Բաժանորդը (Բաժանորդի պատասխանատու անձը) ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով չի մասնակցում սույն կետում նշված ակտի կազմմանը, ապա Մատակարարը կարող է ակտը կազմել միակողմանի: Մատակարարի կողմից կազմված ակտը հիմք է հանդիսանում Բաժանորդին վճարման փաստաթուղթ ներկայացնելու համար:

8. Առևտրային հաշվառքի սարքի այդ թվում նոր առևտրային հաշվառքի սարքի, սլոյսիները գրանցվում են սույն պայմանագրի N1 հավելվածում:

9. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում բնական գազի քանակը վերահաշվարկվում է ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով:

10. Հաշվարկային ամսում, երբ առևտրային հաշվառքի սարքն աշխատել է իր չափման ընդդրկությից (Qmin-Qmax) դուրս, Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակությունը հաշվարկվում է՝

1) եթե չափումը կատարվել է ընդդրկությի ստորին սահմանից (Qmin) ցածր, ապա ծախսն ընդունվում է 0,95 x 100 տոկոսին հավասար,

2) եթե չափումը կատարվել է ընդդրկությի վերին սահմանից (Qmax) բարձր, ապա ծախսն ընդունվում է 0,95 x 110 տոկոսին հավասար:

ճնշման սննկման սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի դեպքում նվազագույն՝ Qmin և առավելագույն՝ Qmax մեծությունները որոշվում են հաշվարկային եզրանկով՝ համաձայն ԳԱՄՕՍ 8.563-97-ի՝ «Էներգիաների և գազերի քանակության և ծախսի քանակության չափումը ճնշման փոփոխական սննկման մեթոդով» և ԳԱՄՕՍ-8.586-2005-ի՝ «Էներգիաների և գազերի ծախսի ու քանակության չափումը ստանդարտ նեղազննող սարքերի միջոցով»: Այն սկզբունքով աշխատող հաշվառքի սարքերի համար նվազագույն՝ Qmin և առավելագույն՝

Qmax մեծությունները որոշվում են հաշվառքի սարքի անձնագրային տվյալների հիման վրա՝ համաձայն համագաղտասխանության սերտիֆիկատի:

5. ԲՆԱԿԱՆ ԳԱՋԻ ՄԱԿԱԳՐԱՐՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԿՉՈՒՄ

11. Մատակարարվող բնական գազի սակագիներ սահմանում է Հանձնաժողովը:

12. Հանձնաժողովի կողմից բնական գազի սակագին փոփոխման դեպքում սահմանված նոր սակագին ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետում:

13. Հաշվարկային ամսում մատակարարված բնական գազի համար (10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդի դեպքում՝ սույն պայմանագրի 7-րդ կետին համապատասխան կազմված ակտի հիման վրա) Մատակարարը ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում Բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ: Հաշվարկային ամսում Բաժանորդին մատակարարված բնական գազի դիմաց վճարման նկատմամբ գումարը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան սակագին և մտակարարված բնական գազի քանակության արտադրյալով: Բաժանորդը մատակարարված բնական գազի դիմաց վճարումը կատարում է ներկայացված վճարման փաստաթղթի հիման վրա՝ ԳԱՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում: Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարվելիք բնական գազի համար կանխավճար կամ վճարման այլ երաշխիքներ պահանջները դեպքերն ու կարգը սահմանվում է ԳԱՄՕԿ-ով:

14. Բողոք դեպքերում, եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպասել է մինչև 10 հազար խորանարդ մետր բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական մինչև 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով, իսկ եթե Բաժանորդը Հաշվարկային ամսում սպասել է 10 հազար խորանարդ մետր և ավելի բնական գազ, ապա Հաշվարկային ամսվա ընթացքում մատակարարված բնական գազի դիմաց վճարում է ամսական 10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնով:

6. ԿՐԿՄԵՐԻ ՊԼԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

15. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ Կրկմերը պատասխանատվության են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԳԱՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

16. Բաժանորդին մատակարարված բնական գազի քանակության դիմաց սույն պայմանագրի 13-րդ կետի համաձայն վճարման ժամկետը խոխուկելու դեպքում Մատակարարն իրավունք

ունի պահանջել Բաժանորդից վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

7. ՖՈՒՄ ՄԱՇՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՔԱՎՈՒՄ

